«Ի թվականիս Հայոց ՉԼԷ յիշխանութեան Պապաքին եւ Ամիր Հասանայ ես Սարգիս եւ որդին իմ Պետրոս շինեցաք զաղբիւրս եւ կանգնեցաք զխաչս ....»*։

Պապաքի զինվորական գործունեության մասին չունինք տեղեկություն, բայց նա 1292 թ. մի հիշատակարանի համաձայն սպարապետության պաշտոն ուներ, ինչպես յեղբայրը Ամիր-Հասան կամ սորա վոր-



Խաչեր, Պապաքի վիմափոր ժամատանը. **Պատկեր 54.**

Թանատի վանքի մի յերկրորդ արձանագրության մեջ նախ Պապաքն և յիշված և ապա Ամիր-Հասան (Հավել. Ա. 18բ.)։ Ալիշան սխալմամբ 1263—1267 թվերի գործ է համարում այն, բայց այդ անկարելի յե, նախ այն պատճառով, վոր, ինչպես տեսանք, այդ թվականներին յեկեղեցին դեռ շինված չեր, և յերկրորդ, վոր այդտեղ հիշված եր Արղունի (1284—1291) անունը։ Պոռշի մահվան տարեթիվը վորոշելուց հետո, ասել կարող ենք, վոր գրված է այն 1284 թվից հետո, վորովհետև անկարելի յեր, վոր նորա կենդանության ժամանակ Խութլու բեկը հիշեր վորդիների, նույն իսկ թոռան անունը՝ «ողորմութիւն Պապաքին Հաս(անայ մանկանն Էչոյ)՝ լռութեան տալով տան նահապետի, մեծափառ իշխանի անունը։

Դրին Էչին հետագայում։ Հիշատակարանը գրված է «յիշխանութիւն մերոյ նահանգիս մեծ սպարապետացն Պապաքին և Էչոյ (տպ. Խաչոյ), որդւոյ և թոռին մեծին Պռոշոյ, ժառանգք իշխանութեան ամենօրհնեալ ցեղին Խաղբականց»*։ Մենք առիթ ենք ունեցել բացատրելու, վոր Պռոշյանները Իվանեի կամ Ավագի տան սպարապետներն եյին. այդ պատճառով ել վերոհիշյալ արձանագրության տեր Խութլու բեկը, վորդի Մխիթարա և թոռն Խալայշահին, թվագրում է «յաշխարհակալութեան Արղունին, իշխանութեան Խոշաքին», և ապա միայն հիշում յուր անմիջական իշխաններին՝ Պռոշի վորդիների անունները։ Ցերկրի գերագույն իշխանը Արղունից հետո Խոշաքն եր, Ավագի և Գոնցայի դուստրը, վոր ամուսնացավ թաթար մի իշխանի հետ, ժառանգելով յուր հոր իշխանությունը**։

Համեմատաբար ավելի տեղեկություն ունինք Պա-

կությունը Պռոշյանց իշխանության սահմաններում հասկանալու համար, չպետք է մոռանալ, վոր Վայոց ձորի գյուղերը հոգևորապես յենթարկվում եյին Սյունյաց թեմին։ Նորա անվան կրկնությունը կտեսնենք և ուրիշ հիշատակարանների և արձանագրությունների մեջ։

* Սիսական 175։

** Արարատ. 1876. 412։

** Օրբէլեան 412. 418. Շողակաթ Զաքարիայի ժողովը. 24։